

## ԱՐՑԱԽԻ ՏՐՍԱՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՄԱՍԻՆ

Լենա Սուլեյմանյան  
Մեսրոպ Մաշտոց Համալսարան  
Արցախ

**Անոտացիա:** Սույն հոդվածում ներկայացվում է 1921թ. Արցախի Տրնավազ-Կարմիրգյուղ գյուղի կոտորածը, որը թուրքական ցեղասպանագործության յուրօրինակ դրսնորում էր, և այնքան խայտառակ պատմություն, որ հետագա ժամանակներում խորհրդային իշխանությունները, որոնք նույնքան մեղսակից էին, ստիպված էին հմտորեն կեղծել իրական ճշմարտությունը:

**Բանալի բառեր՝ Կարմիրգյուղ, մարտյան ողբերգություն, կերծում, վկայություն, ռազմավարական հենակետ, բնակչության ցուցանիշ, հուշարձան:**

Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Տրնավազ գյուղը հին պատմություն ունի: Նախկին բնակավայրը գտնվում էր ներկայիս գյուղից 1,5 կմ հեռավորության վրա՝ Խաչին տակ կամ Ըղեն նահատակ կոչվող տեղամասում: Պահպանվել են կիսավեր նույնանուն եկեղեցին, մի շարք խաչքարեր՝ բնորոշ 12-13-րդ դր., խաչքարերից մեկը թվագրվում է 1071թ-ով, իսկ գերազանցը՝ 9-14-րդ դր.: Հին բնակավայրի ավերվածության ժամկետը դժվար է որոշել, ավանդույթի համաձայն գյուղի հոգևորական Տեր Արտավազը հավաքել է անտառներում կենդանի մնացած համագույղացիներին և ներկայիս գյուղի տարածքում հիմնավորել նոր բնակավայր: Նրա անունով գյուղը կոչվել է Տրնավազ կամ Դոնավազ, մահմեղականներն անվանել են Քեշիշքենդ՝ հոգևորականի գյուղ: Այժմյան գյուղի պատմությունը սկսվում է 15-16-րդ դարերից [3, էջ 85], իսկ նշանավոր պատմական հուշարձանները 19-րդ դարի կառույցներ են, մասնավորապես Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ 1841թ., ուշագրավ արձանագրություններով 1861թ. կառուցված աղբյուր-հուշարձանը [13]:

Սովորական խաղաղ առօրյայով ապրող գյուղի պատմության մեջ 20-րդ դարասկիզբը ողբերգական էր: 1918-1921 թվականները նշանավորվեցին որպես արցախահայության բազմադարյան պատմության ծանր շրջաններից մեկը: 1918թ. մայիսին, երբ գերազանցապես հայկական նահանգներին տիրած «կովկասյան թաթարներ» կոչված քոչվոր ժողովուրդն իրեն հայտարարեց «Աղբբեջանցի» և կազմվեց համանուն պետությունը, ասպարեզ բերվեց «Աղբբեջանի» տարածքային պահանջները հարեւան պետություններից: Հայաստանի պարագայում նախանշված էին այն տարածքների զավթումը, որոնք կանգնած էին պանթուրքիզմի ճանապարհին՝ Զանգեզուր և Արցախ-Ղարաբաղ:

Իրավիճակը չփոխվեց անգամ Աղբբեջանի խորհրդայնացումից հետո /1920թ. ապրիլի 28/՝ 1918թ. մայիսին և 1920թ. ապրիլին ստեղծված «Աղբբեջան» անվանումով պետությունները երկու դեպքերում էլ ստեղծվել էին աշխարհաքաղաքական նկատառումներից ենելով, և ամենին պատահական չէ, որ դրանք ստեղծվեցին համարուրանականության և հայոց ցեղասպանության ծրագրերի իրականացման շրջանակներում [9, էջ 109]: Այս մասին ավելի խոսուն է Խորհրդային Աղբբեջանի հեղկումի նախագահ Ն.Նարիմանովի հայտարարությունը: Պատելով Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի Աղբբեջանին միավորելու անհրաժեշտությունը՝ նա հոլորդում էր՝ «Աշխարհում ոչ ոք ի վիճակի չէ մեզ արգելել ազդելու վերոհիշյալ մարզերի բնակչության վրա՝ արտահայտվելու Աղբբեջանին միավորման օգտին»: Ավելի բաց է արտահայտվում ամբողջ Ղարաբաղի լիազոր նշանակված Ա. Կարաևը: 1920թ. հուլիսի 19-ին Գորիսի գավառային հեղկումին հղված գրությունն ուղղակի բացարձակ գործողությունների կոչ է անում. «Զանացեք, որպեսզի բոլոր երևելի և նշանավոր հայերը բանտարկված լինեն... Թողեք մարդասիրությունը: Դրանով չես կարող պետություն ստեղծես կամ երկրներ նվաճես» [12, էջ 25-26]:

Օրհասական այդ տարիներին, երբ արցախահայությունը զրկված էր կողմնակի օգնությունից, իսկ Հայաստանի Հանրապետությունում սկսվել էր քաղաքացիական պատերազմ, տեղի ունեցավ ժամանակի ամենաողբերգական իրադարձությունը՝ Տրնավազ գյուղի կոտորածը: 1920թ. Շուշիի մարտյան ողբերգությունից հետո այս դեպքը թուրքական ցեղասպանագործության յուրօրինակ դրսնորում էր, և այնքան խայտառակ պատմություն, որ հետագա ժամանակներում խորհրդային

իշխանությունները, որոնք նույնքան մեղսակից էին, ստիպված էին հմտորեն կեղծել կամ քողարկել իրական ճշմարտությունը:

Պատմական ճշմարտության վերականգնում ավելի է խստապահանջ դառնում հատկապես այն պարագայում, եթե իրողությունները անձնական երանգավորում են ստանում: Աննախաղեպ ոճիրն իրագործվել էր տողերիս հեղինակի հայրենի ծննդավայրում. փոքր տարիքից դեպքի վերաբերյալ հակիրճ տեղեկություններ էին հաղորդվում մեզ, անթաքույց ձևով մեծերը գգուշավոր էին, ու անդիմադրելի մի ուժ մեզ հեռու էր պահում զյուղում բնակություն հաստատած աղբեջանցինների բնակատեղից: Խորհրդային միջավայրում բոլորը «եղբայր էին ու հարազատ», միմիայն շարունակվում էր մշուշապատ ու կաղապարված մնալ իրական ճշմարտությունը:

1920թ. թաթարական խոռվությունների, հայկական զյուղերի ոչնչացման, բնակչության մասնակի կոտորածների վերաբերյալ պատմական տեղեկություններում Տրնավագի դեպքը կամ շրջանցվում էր, կամ հաղորդվում էին ժամանակակից տեղեկություններ: Այս մասին ամենաանսպասելի լուրջունը պահպանում են ՀՂՀ և ՀՀ պետական արխիվները՝ չկա ոչ մի տեղեկություն, չի պահպանվել ոչ մի փաստաթուղթ:

Դեպքի մասին որոշ տեղեկություն հաղորդում է Ս.Մելքոնյանը. «**1920թ., ինչպես և Շուշիում, թուրքական մուսավարական բանդաները համատարած արյունահեղություն են կազմակերպում նաև այստեղ: Գյուղն ավերելուց, թալանելուց, կանանց, երեխաների նկատմամբ վայրագություններ կատարելուց հետո, նրանք 80 տղամարդու ծեծելով հասցնում են Շուշի, որտեղ դրանցից 73-ին գազանաբար սպանում են, իսկ 7-ին հաջողվում է հրաշքով կենդանի մնալ»[7, էջ 130]:**

Ժամանակակիցներից Հ.Թումյանը, ով 1918թ. ձևավորված Ղարաբաղի ժողովրդական կառավարության անդամ էր որպես զինվորական գործերի վարիչ [2, էջ 20], «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թք.» հուշագրությունում՝ անդրադառնալով Ղարաբաղում Խորհրդային Աղբեջանի ծրագրած ուժերենդումի իրագործմանը, հապանցիկ նշում է. «Մի խումք բոլշևիկներ (Լեռն Միրզոյան, Արմենակ Ղարայովյան, Սահակ Դովլայի և այլք) իրենց զյուկու ունենալով Աղբեջանի դեկավարության ներկայացուցիչ՝ ծափոյալ մուսավարական Կարասին, որը 1920թ. Աղբեջանի խորհրդայնացումից հետո Շուշում իր աշքի առաջ կոտորել էր տվել Վարանդայի Տրնավագ հայկական զյուղից բռնի քաղաք տարված 60 անմեղ հայ երիտասարդ գեղջուկների, ահա այդ մարդու դեկավարությամբ, վերոհիշյալ անձինք հավաքվում էին... ուժերենդում կազմակերպել»[4, էջ 308]:

Տրնավագի դեպքերին է անդրադառնում նաև Ս.Մարկոսյանը «Արցախի ժողովրդական երաժիշտներ» գրքի «Վարպետ Ասլանի դժվար հյուսած լեզենդը» մասում [6, էջ 96-99]: Մասնավորապես նշվում է, որ դեպքը տեղի է ունեցել **1920թ. գարնանը**, մի խումք հրացանավոր թուրք մուսավարականներ եկել էին զյուղից մի 60 գրագետ, շահել տղաների հրավիրելու Շուշում կայանալիք լիազումար ժողովին՝ կապված Ղարաբաղի հետագա ճակատագրին ու խորհրդայնացմանը: Ժողովին ներկայացուցիչներ պիտի լինեին նաև հարևան զյուղերից: Հայերը հավատալով թուրքերի խաղաղ ու բարի կամքին, ճանապարհ են ընկնում, Ավետարանցի ճանապարհին մի քանի ձիավոր թուրքեր կլ են հավաքվում՝ տեղեկացնելով, որ ժողովը կայանալու է Շուշիում: Տրնավագիների դեպքի Շուշի ճանապարհը վերջակետվում է դաժան հաշվեհարդարով. գնդացրային համազարկը տապալում է հայերին: Թուրքերը միայն զուռնահար Ասլանի կյանքն են խնայում...

Վերոնշյալ տեղեկությունները, բնականաբար, վիճահարույց են ու անտրամաբանական: Եթե իրոք դեպքը տեղի է ունեցել նշված ժամանակահատվածում, եթե աղբեջանա-թաթարական ուժերի կողմից հայերի կյանքն արդեն իսկ վտանգված էր ու հաճախարեալ էին դարձել կոտորածները, ապա ժամանակակիցներն ու աղբյուրներն այդքան ժամանակակից չպետք է լինեին նման ահավոր սպանողի վերաբերյալ:

Լոռության շղարշը տեղի տվեց 2011թ. լույս տեսած Ա.Կիսիբեկյանի «Հուշեր» երկիատորյակի լուսանձայումից հետո, որտեղ հեղինակը բավականին հետաքրքիր ու ցավոտ տեղեկություններ է հաղորդում դեպքի մասին (մեջբերումը բառացի). «Ղարաբաղի արյունտ պատմության մեջ նման ոճրագործությունը թուրքերի ձեռքով ոչ առաջինն է և ոչ էլ եզակի դեպք: Սա մուսավարական կառավարության ժամանակ կատարված արյունտ դեպքերի շարունակությունն է, միայն այն տարբերությամբ, որ այս արյունտը ու սարսափելի դեպքի «հերոսները» Խորհրդային Աղբեջանի կումունիստ դեկավարներն են: ...Տրնավագ զյուղի կոտորածն Աղբեջանի կառավարության ձեռքով, նրա քանակի միջոցով, տեղի ունեցավ **1921թ. հունվար ամսին:** Այդ ժամանակ ես Գանձակի

բանտից ազատվել էի և իրավունք չունեի հեռանալու այդտեղից: Կոտորածի ժամանակ ես բացակայում էի Ղարաբաղից, ուստի թերում եմ մի շարք մարդկանց տված տեղեկությունները, որոնք ականատեսն են եղել այդ արյունոտ դեպքին»:

Ուսուցիչ Սիմեոն Լալայանը (60 տարեկան, Սարաշեն /Սարուշեն գյուղից), պատմում է, թե ինչպես Շուշիի իր բնակարանի պատուհանից ակամայից ականատեսը դարձավ մեծ ոճին. «Ես և Լամբարոնը (Սարուշենի հեղկումի նախագահը) կանգնած էինք պատշգամբում և գրուցում էինք, եթե տեսանք մի մեծ խումբ մարդկանց շրջապատված ասլյարներով, թերին «Խանեն աղջկա» աղբյուրի մոտ գտնվող ազատ տարածությունը: Բացի ասլյարներից շրջապատել էր նաև թուրք ամբոխը և քարերով, փայտերով խփում էին այդ կապած կոներով մարդկանց:... Այդ ժամանակ մենք լսում էինք, թե ինչպես մի ուժեղ ձայն բղավում էր. «Տօբարի, ու հեյզ»: Մենք այս նախադասությունը լսեցինք 2-3 անգամ, որից հետո լսվեց մի պայյելուն և դադարեց ձայնը, իսկ ամբոխը, ծեծելով այդ մարդկանց, քեզ դեպքի բանտը: Ամբոխը երբ հեռացավ, այդ ազատված տարածության վրա ընկած մնաց մի զինվորի դիակ: Հավանական է դա այն զինվորն էր, որն աշխատում էր թույլ չտալ ամբոխին մարդկանց կոտորելու:

**Տրոնավարզ գյուղից թերած մոտ 60-65 մարդկանց քշելով հինավորց թերդի մեջ՝ սկսեցին կոտորել քարերով, դագանակներով ու սրերով: Մի քանի մարդիկ, որոնք վիրավորված մնացել էին դիակների տակ, ուշքի գալով, դուրս են գալիս գիշերը ու փախչում: Ես և Լամբարոնը դուրս եկանք և փախանք քաղաքից... Երբ մենք հասանք Մամնայի գյաղուկը, մեր դեմ ելավ Քոսանե գյուղացի, այդ շրջանի գլխավոր կոմունխատներից մեկը՝ Նայկ Առատամյանը: Նա ինձ հարցըց՝ ի՞նչ տեղեկություն ունեք Տրոնավարզ գյուղից Շուշի տարած մարդկանց մասին: Երբ ես պատմեցի, նա ասաց. «Որ այդպես է, ես շուտ... հասնեմ Շոշու, որտեղից մի խումբ մարդիկ պետք է նորից ուղարկեն Շուշի: Որ շուղարկեն»:**

Այդ վայրագությունը կատարվեց ամբոխի ձեռքով Աղբեջանի դեկավարների աշքի առջև, որոնք ձևացրին, որ ոչինչ չեն տեսնում:

Դանիել Դանիելյանը Տրոնավարզ գյուղացի է, ինքը կրթված ու մեղվարույծ, ով ականատես է եղել այդ ոճին.- «Այդ ժամանակ Ղարաբաղը ծանր օրեր էր ապրում. Տանյակներով գնդակահարվել էին, հարյուրավոր մարդիկ ուղարկվել էին Բաքվի, Գանձակի բանտերը, հազարավոր մարդիկ բանտարկված էին Ղարաբաղի բանտերում, իսկ շատ երիտասարդներ էլ փափել էին անտառները: Սկսվել էին քաղաքացիական կոհիվները: Այստեղ իրար դեմ կանգնած էին բոլշևիկյան և հակաբոլշևիկյան ուժեր: ... Հակաբոլշևիկյան ուժերը գրավում են Տրոնավարզը, որտեղ մի օր առաջ Շուշուց եկել էր թուրքական դերասանական մի խումբ, երեկոյան ներկայացում էր տվել ու գիշերում էր Տրոնավագում, երբ գյուղը գրավեցին և տեսնելով թուրքերին՝ այդտեղ կոտորեցին նրանց: ... Լուրը հասնում է Շուշի, գալիս է աղբեջանական կառավարության անդամ Կարաևը Կարմիր բանակի թուրքական զորամասի հետ, որը բաղկացած էր կուրսանտներից: ... Գյուղը գտնվում էր միանգամայն անպաշտպան, ժողովուրդը թաքնվում է զանազան տեղերում: Կարաևը խարում է հայտարարելով, թե չեն եկել պատժելու, այլ բարեկամական այցելություն է: Ժողովուրդը հավատալով դուրս է գալիս թաքստոցներից, սկսվում է ժողովը: **Զորքը շրջապատում է ժողովարանը և սկսում բռնություններ, բռնաբարություններ, և վերջում ջոկում է 63 հոգու, կոները կապում: Զորքի մի մասը քշում է նրանց Շուշի, իսկ մի մասը սկսում է թալանը: Շուշվա թուրք զինված բնակչությունը նախօրոք իրագեկ էր դարձված այդ անցուղարձին, և պատրաստ սպասում էր: Քաղաք են մտնում Կարաևն ու զորքի մի մասը՝ կալանավորներին շրջապատած: Կարաևն ու զորքն անհետանում են՝ թողնելով կալանավորներին թուրք բնակիչների առաջ: Սրանք հարձակվում են և ջարորւմ բռլորին, ուկորները թողնում են թափված գետնին:**

Շրջանի հայ գյուղացիները, երբ իմանում են այս մասին, դուրս են գալիս թալանչի ու ավազակարար ոճագրքների դեմ և տեղի է ունենում ուժեղ կոհիվ, որը տևում է մի քանի ժամ: Թալանչիները տեսնելով, որ պետք է ոչնչանան, ստիպված են լինում թողնել ամբողջ թալանը և փախչել ազատելով իրենց գլուխը»:

Ա.Կիսիբեկյանը նաև նշում է. «Ասում են՝ ոռուսական զորագնդի հրամանատար Վացիխովկակին լսելով այդ դեպքի մասին, գալիս է իր թե կանխելու ողբերգությունը, սակայն շատ ուշացած... Զբավարավելով սրանով, նորից Շուշի են թերում չորս հոգու «օրենքով» դատելու համար: Այս չորսին էլ Շուշիում գնդակահարեցին առանց հարցաքննելու ու առանց դատի» [5, էջ 156-166]:

Անդառնալի այս մեծագույն ողբերգության պատմությունը ամբողջական է դառնում կարմիրգուղյի (այժմ ապրում է Ստեփանակերտում), 1947թ. ծնված Նելսոն Մուսայելյանի վկայությունից: Վերջինս 1960-ական թթ. անձամբ է դեպքի ականատես Սամսոն Մելքոնյանից ու Սովուս Ավետիսյանից լսել կոտորածի պատմությունը. «Սամսոնն ու Սովուսը հաճախակի էին լինում մեր տանը, հայր գուղխորհրդի քարտուղար էր, ուսուցիչ հաճախ էին հիշում անցյալի մասին: Կոտորածի պատճառը Թևան Ստեփանյանն էր: **Դեպքը տեղի է ունեցել 1921թ. հունվարի վերաբարին:** Շուշիից ազիտրիգադա է ժամանում գյուղ որպեսզի բնակչությանը համոզեն միանան Ադրբեջանին: Սրանք գիշերը մնում են գուղում, տեղափորկում գյուղացիների տներում: Թևանն այդ ժամանակ գտնվում էր Խաչմաշ գյուղում: Տրնավազում դաշնակցականները քիչ էին, բոլշևիկներն էին շատ: Զնայած Շամիր քյոխվան դաշնակցական էր, սակայն ոչինչ չի ձեռնարկում, բայց թէ մտքին ինչ կար ոչ ոք չգիտեր: Գյուղացիներից մեկը գաղտնի տեղեկացնում է Թևանին թուրքերի մասին: Թևանը գիշերով շրջապատում է գյուղը (գյուղացիներն անտեղյակ էին), կոտորում անզեն թուրքերին: Ուղիղ մեկ շաբաթ սպասում է գյուղում սպասելով թուրքերի արձագանքին: Մեկ շաբաթ թուրքերի դիակները փոված են մնում գյուղամիջյան ճանապարհին, գյուղացիներին գնդակահարության սպառնալիքով արգելված էր մոտենալ, քաղել դիակները, յուրաքանչյուր դիակ հսկվում էր գինվորի կողմից: Գյուղի շները սկսում են հոշոտել նեխող դիակները: Մեկ շաբաթ անց լուր է ստացվում, որ 11-րդ Կարմիր բանակի ջոկատները՝ Կացիխովսկու զինավորությամբ մոտենում են Աղդամի մասույցներին: Թևանն իր շոկատով հեռանում է Տումի գյուղ: Միայն դրանից հետո են գյուղացիները հավաքում թուրքերի դիակները և քաղում մոտակա մարագում: Դրանից 10 օր անց գյուղ են ժամանում երկու թուրք հետաքրքրում գյուղ ժամանած ազիտրիգադայի ճակատագրով: Գյուղացիները իրենց անտեղյակ են պահում դրա վերաբերյալ, սակայն լրտեսների միջոցով թուրքերն իմանում են դեպքի մասին, ստիպում հանել դիակները և հրամայում ինչպես կոտորել էր, այնպես էլ բերեք Շուշի: Գյուղացիները սեփական սալերով դիակները տեղափոխում են Շուշի, հաջորդ օրն անվնաս, առանց որևէ մեկնաբանության վերադառնում են գյուղ:

**Փետրվար** ամսին, արևոտ օր էր, երկու թուրք զինվորականներ են ժամանում Շուշից, թէ Սուլթանովը շրջակա հայ գյուղերի երևելի մարդկանց ժողովի է հրավիրում Շուշի, բայց խումբ-խումբ են գնալու: Գյուղացիների մի մասը անհավատ, մի մասն էլ հավատալով կազմում են առաջին խումբը՝ 25 մարդ, և ճանապարհվում: Շրջակա գյուղերից ոչ ոք չկար:

Գյուղից քիչ հեռու փոշտի ճանապարհ (ներկայիս ավտոմայրուղու Կարմիրգուղի խաչմերուկը) տեղամասում Սամսոնը վտանգ զգալով՝ հորդորում է կողքից քայլող ընկերոջը փախչել, վերջինս հրաժարվում է: Հետաքրքիր մարդ էր Սամսոնը, կարձահասակ, բայց մկանուտ, առաջին Աշխարհամարտի մասնակից /ի դեպ խմբում կովի մասնակիցները շատ էին/: Ընկերոջ հետ տեղները փոխում են, որ կարողանա մոտակա անտառը փախչել, սակայն թուրքերը նկատում են, կոպտորեն հետ քաշում իր տեղը: Նախքան Շոշ հասնելը աստիճանաբար թուրքերի քանակը շատանում է: Շոշում մի երկիրականի տան բակում կանգնում են, իր հանգստի: Երկրորդ հարկում թուրքերը գրուցում էին: Մեկը հետաքրքրվում էր, թէ ովքեր են: Երբ լսում է Քեշիշչենդի (տերտերի գյուղ) դաշնակցականներն են, շուազ հրամայում է՝ տարեք, կոտորեք: Տանում են Շուշի, քաղաքամիջյան ճանապարհին թուրք բնակչները, կանայք, երեխաներ, փայտերով, քարերով շարդում են անպաշտպան խմբին: Արդեն մութք ընկած հասնում են բանտ: Խումբն ամբողջովին արյունլվիկ էր դարձել: Երբ հակիչներից մեկը նկատում է Սամսոնին, որը բացարձակ ոչ մի քերծվածք չուներ (կողուտ լինելու պատճառով նրան վնաս չէր եղել), հրացանի սվինով հարվածում է դեմքին: Սամսոնն ուշից է գալիս բանտախցում, գլուխը փաթաթված էր, թուրքի հարվածը ճեղքել էր երկու այտերը: Այդ ահավոր միջադեպից հիշատակ մնաց սպին: Ամրող խումբը մի խցում էր տեղակայված, անընդհատ ծեծն ու ջարդը խեղանդամ են դարձնում մարդկանց: Բայց առաջին խմբին վիճակված էր թեկուց կիսակենդան, ազատ արձակվել ամուսնը: Երբ վերադառնում են գյուղ, թուրքն արդեն հասել էր, բաղերում օդի էին քաշում»:

Ադրբեջանի և Թուրքիայի ծավալապաշտական ծրագրերի մասին 1923թ. Արսեն Միքայելյանը գրել է (որպես ականատես). «1918-1921թթ. երեք տարուայ ընթացքին, շատ պարզ կերպով կը նկատուեր ձգտում՝ իրագործելու որոշ ծրագիր մը: Այդ ծրագրին նպատակն էր տիրանալ Ղարաբաղ-Զանգեզուրին»[1, էջ 206]: Սիա այդ ծրագրի շրջանակներում և իրագործվեց Տրնավազի կոտորածը. նույն թուրքական ձեռագիրն էր, հաշվարկված, սառնասիրտ ու շրատապարտված:

- ոճրի առաջին փուլում խաբեությամբ գյուղից հեռացրին, Շուշիում մոլեուանդ ամբոխի կողմից լավ շարդ տալուց հետո մեկուսացրին ռազմական գործում հմտացած, կրթված ու երևելի 25 տղամարդկանց;

- երկրորդ փուլում իրազորձվեց քստմնելի կոտորածը, 60-ից ավելի մարդ շարդված, փշրված ու անգերեզման անհետացավ Շուշիի ձորում;

- երրորդ փուլում հաշվեհարդար տեսան գյուղի դաշնակցականների հետ՝ 4-10 մարդ, այդ թվում և Շամիր քյուխվան որդու հետ:

1918-1921թթ. ընթացքում Տրնավազը շուրջ 150 զոհ ունեցավ, մասսայականը խորհրդային անվանված Աղրբեջանի իշխանությունների իրականացրածն էր՝ 80-ից ավելի մարդ: Քստմնելի այս ոճրի պատմության մեջ ամենացավալին՝ ինչպես վկայում է Կիսիբեկյանը, այն է, որ կարծես դրանք միջատներ էին, ոչ ոք չհետաքրքրվեց ու ոչ ոք պատասխանատվության չենթարկվեց սոցիալիստական իրավակարգում. «Ղարաբաղի հայ բոլշևիկները «միսիթարեցին» Տրնավարդ գյուղի հասարակությանը՝ նրա անմեղ նահատակների հիշատակը «հավերժացնելով»՝ Տրնավարդը վերանվանելով Կարմիր գյուղ»<sup>[5]</sup>, էջ163], և հաշված ժամանակ հետո՝ 1921թ. հուլիսի 5-ին, արդեն իսկ բզեզտված Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Աղրբեջանին:

Կարծում ենք պատահական չեր այս ոճրը գյուղի հանդեպ: Փոփոխական այդ ժամանակահատվածում Արցախ-Ղարաբաղը ծվատվում էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամու կողմից: Թիրախն ուղղակի Շուշին էր, այս պարագայում Տրնավազը միջանկյալ ու ռազմավարական կարևոր հենակետ էր: Ս.Մելքոնյանը գրում է. «Լեռնային գյուղ է, տեղադրված է Բովուրիան լեռան հարավային լանջին, բարձրությունը ծովի մակերևույթից 1400 մետր է» [7, էջ130]: Բնական բարձրությունը թույլ է տալիս մշտական հսկողության տակ պահել շրջակայքը, հետևաբար, ժամանակ առ ժամանակ՝ ըստ պատեհության, գյուղում տեղակայվում էին ինչպես բոլշևիկները, այնպես էլ Թևան Ստեփանյանը, անգամ Դրոն: Երբեմն գյուղն ուղղակի ռազմադաշտի էր վերածվում, բազմաթիվ անգամ են մուսավաթներն իրենց պարտությունը կրել այստեղ: Հարկ է ընդգծել մի կարևոր փաստ՝ արտաքին թշնամու հանդեպ տրնավազցիները հանդես էին գալիս միասնական, կուսակցական պատկանելիությունը նման դեպքում դերակատարություն չեր ունենում<sup>1</sup>:

Նույնքան հետաքրքիր երանգավորումներ է ունեցել նաև գյուղի ժողովրդագրական պատկերը: Ավելի վաղ տեղեկություններում Ս.Բարխուդարյանը գյուղի եկեղեցու հիմնարկեքը նշում է հայոց ՌՄԴ թվականին, 3 քահանա, 128 ծուխ, ար. 466, իգ. 362, տղայոց միադասյան ուսումնարան, աշակերտ 65, թոշակատու 60, տարեկան վարժապետին 250 ոռլիք [3, էջ 85]:

Ս.Մելքոնյանի տվյալներով 1840-ական թթ. գործել է ծիսական դպրոց: 1894թ. սովորում էր 65 աշակերտ: 1920թ. այստեղ եղել է 1800 բնակիչ և Սուսայելյանը նշում է 2000-ից ավելի, 1987թ.՝ 72 տուն, 198 բնակիչ: 1987թ. միջնակարգ դպրոցն ուներ 62 աշակերտ, 19 ուսուցիչ: Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 160 մարդ, զոհվել է 102-ը, որոնց հիշատակին կառուցվել է հուշարձան [7, էջ130-131]:

1988թ. հայտնի դեպքերով վճռականորեն նոր փուլ մտած արցախյան շարժման բնական հետևանքով նորանկախ Արցախի Հանրապետությունում բնակչության թվաքանակի ցուցանիշը զգալիորեն նվազեց: 2005թ. հանրապետությունում առաջին անգամ անցկացված մարդահամարի տվյալներով Կարմիրգյուղում առկա և մշտական բնակչությունը կազմել է 174 մարդ, 86 տղամարդ, 88 կին [14]: Առայսօր բնակչության ցուցանիշը էական փոփոխություն չի կրել:

Գյուղի մերօրյա պատմության մեջ առանձնանում է 1991թ. ապրիլի 24-ը: Դեռևս խորհրդային իրավակարգում գյուղում բացվում է նոր հուշարձան՝ «Հայոց Մեծ Երեսնի զոհերի և 1920թ. Շուշիում մուսավաթների կողմից բարբարոսաբար նահատակված Տառնավարզցիների հիշատակին» վերտառությամբ: Ըստ երևույթին, ժողովրդի պատմական հիշողությունը հաղթող դուրս եկավ «ամենակարող» խորհրդային իրավակարգի հետ առձականում մեջ: Թեկուզ այս կերպով համագյուղացիները հավերժացրին մուսավաթ թուրքերի ձեռքով նահատակված համագյուղացիների հիշատակը: Հայրենի հողն իր մեջ ամփոփեց նաև արցախյան գոյամարտում զոհված երկու ազատամարտիկներին:

<sup>1</sup> Տեղեկությունները հաղորդում է կարմիրգյուղի Ն.Մուսայելյանը

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Մ., Հայ Աղվանից Եկեղեցին /սկզբնավորումից մինչև մեր օրերը/, Ստեփանակերտ, 2009:
2. Բալայան Վ., Լեռնային Ղարաբաղում հայկական պէտականության կազմավորման գործընթացը /1917թ. դեկտեմբեր-1918թ. հուլիս/, Լրատու 2 /9/, Ստեփ., 2010:
3. Բարխուդարյան Մ., Արցախ, Բագու, 1895:
4. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում /1917-1920/, Եր., 2008:
5. Կիսիբեկյան Ա., Հուշեր 2, Եր., 2011:
6. Մարկոսյան Ս., Արցախիժողովրդականերաժիշտներ, Եր., 2004:
7. Մելքոնյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Եր., 1990:
8. Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմա-ձարտարապետական հուշարձաններ, Եր., 1980:
9. Փաշայան Հ., Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական ետնախորքը և «ադրբեջանական» պետության ստեղծման անօրինակության հիմքերը, Լրատու, 2010, 2 /9/:
10. Ներկայացված են կարմիրգյուղի Ն.Մուսայելյանի բանավոր վկայությունները:
11. Մկրտչյան Ռ., Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ер., 1989:
12. Нагорный Карабах.историческая справка, Ер., 1988:
13. [www.monuments.nkr.am](http://www.monuments.nkr.am)
14. Տես [www.stat-nkr.am](http://www.stat-nkr.am), Մարդահամար 2005:

### РЕЗЮМЕ

**О трагическом прошлом арцахской деревни Триваз**  
**Лена Сулейманиян**

**Ключевые слова:** Кармиргюх, мартовская трагедия, фальсификация, свидетельство, стратегический пункт, показатель населения, памятник.

В данной статье представлена резня деревни Триваз-Кармирагюх Арцаха в 1921 году, которая стала своеобразным проявлением турецкого геноцида и настолько позорной ситуацией, что в дальнейшем советские власти, являясь соучастниками, были вынуждены искусно фальсифицировать истину.

### SUMMARY

**On the Tragic Past of Trnvaz Village of Artsakh**  
**Lena Suleymanyan**

**Key words:** Karmragyugh, the March tragedy, falsify, testimony, strategic point, the rate of population, monument.

This article deals with the massacre of the village Trnvaz-Karmragyugh of Artsakh in 1921, which became the demonstration of the Turkish genocide and such a disgraceful situation that later the Soviet power being accessory to the crime were forced to skillfully falsify the truth.